ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2021թ. N-- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 15.08.2002թ. հ.հ.504306 և 504310 վկայականներ) 464.0քմ և 257.0քմ մակերեսներով տարածքները անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2026 թվականի մարտի 30-ը ժամկետով տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող 464.0քմ և 257.0քմ մակերեսներով տարածքները տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով:

Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող 464.0քմ և 257.0քմ մակերեսներով տարածքները համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 15.08.2002թ. հ.հ.504306 և 504310 վկայականների տվյալների՝ հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը:

Կենտրոն համայնքի ավագանու 25.07.2008թ. հ.5/38 որոշման համաձայն՝ քննարկվող տարածքները անհատույց օգտագործման իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրվել են «Բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին: Վերջինիս հետ 23.12.2008թ. կնքվել են տարածքի անհատույց օգտագործման հ.հ.10115 և 10114 պայմանագրերը, որոնցից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 26.12.2008թ. հ.հ.2561477, 2561476 վկայականներ/:

Մարզադպրոցը հիմնադրվել է 1959 թվականին՝ ի պատիվ օլիմպիական խաղերի չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանի և գործում է որպես բռնցքամարտի մասնագիտացված մարզադպրոց, որտեղ մարզվում են 8-18 տարեկան 360-ից ավել մարզիկներ: Մարզադպրոցի սաները միշտ աչքի են ընկել իրենց նվաճումներով օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, Եվրոպական խաղերում, բազմիցս ապացուցելով հայկական բռնցքամարտի բարձր կարգը:

Քննարկվող հասցեում գտնվող տարածքները ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցությունը 15.01.2021թ., «Լույս» խմբակցությունը 11.01.2021թ., «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը 14.01.2021թ. գրություններով առարկություններ չեն ներկայացրել և այն գնահատել են դրական:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է քննարկվող տարածքները մինչև 2026 թվականի մարտի 30-ը ժամկետով տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ